

ՊԱՅՇՈՂՈՒԹԻՒՆ

Մեր ժամանակակից սերունդը պահեցողութիւն ըսելով թերեւս կը հասկնայ մսեղէնէ, կաթնեղէնէ եւ ամէն տեսակի կենդանական արտադրութենէն հրաժարիլ: Ասիկա սակայն պահքի մասին ոչ ժամանակներուն եւ քաղքենի դասակարգին ըմբռնումն է: Սկիզբէն այնպէս չէ եղած: Ըստ Աստուածաշունչի տուեալներուն, պահեցողութիւնը սուգի եւ ցաւի շրջան մըն է, ինքնագրկանք մը՝ կամ ինքզինքին տրուած կամաւոր պատիժ մը, որ կ'իրագործուէր որոշ ժամանակ մը ամբողջովին հրաժարելով ուտելիք եւ խմելիք, ինչպէս նաեւ՝ ամէն տեսակի ՀԱՃՈՅՔԷ: Կարելոր է այս վերջին պարագան, այսինքն՝ հրաժարիլ նաեւ հաճոյքէ, որովհետեւ պահք եւ հաճոյք իրարու հակադիր երեւոյթներ են, եւ հետեւաբար կարելի չէ երեւակայել պահեցողութիւն մը, որուն կ'ընկերանայ նաեւ խաղ, ուրախութիւն եւ պար: Ուրեմն կրօնական նպատակով ինքզինքին պարտադրուած որեւէ զրկանք պահեցողութիւն է:

Պահքէն անբաժան էր ԱՂՕԹՔԸ: Եթէ ուսումնասիրենք սուրբ Գիրքը, պիտի տեսնենք, թէ ուր որ պահքի մասին հրաման կը տրուի՝ կը յանձնարարուի միաժամանակ աղօթքը: Երբ մարդիկ պահեցողութիւն կ'ընեն, միաժամանակ կը կիրարկեն նաեւ աղօթքը: Պահքը սակայն հետզհետէ աւելի կիրարկելի դարձաւ, իբրեւ ապաշխարանքի նշան եւ արտաշաշտութիւն:

ՄԵԾ ՊԱՅՈՑ ՇՐՋԱՆԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին մեծ կարեւորութիւն ընծայելով պահեցողութեան, յատուկ կերպով հոգ տարած է նաեւ հոգեւոր երգերու եւ շարականներու ստեղծագործման: Ապաշխարութեան շարականներուն մէջ, աշխարհը կը ներկայանայ որպէս մեղքի ովկիանոս եւ մեղաւոր մարդը՝ այդ ովկիանոսին մէջ ընկղմող նաւ, որ նաւապետի օգնութիւնը կը խնդրէ. «Կեանքիս ծովը գիս միշտ կ'ալեկոծէ: Նաւապետ Բարի, իմ անձիս ապաւէն եղիր: Մօտ եմ ընկղմելու, օգնէ ինձի, Նաւապետ Բարի, որովհետեւ իմ մեղքերուս բեռը վրաս կը ծանրանայ»: (Շարական Ապաշխարութեան Ա.4):

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին, ինչպէս գիտեմք ունի եօթը ժամերգութիւններ: Այդ եօթը ժամերգութիւններէն երեքը՝ Մեծ Պահոց շրջանին կը կատարուին. Զորեքշաբթի եւ Ուրբաթ առաւօտները՝ Արեւագալի, իսկ երեկոյեան՝ Խաղաղական եւ Հանգրստեան ժամերգութիւնները:

ՓԱԿԵԱԼ ԽՈՐԱՆ

Մեծ պահքի շրջանին, եկեղեցիներէն ներս խորանները կը մնան փակ: Միակ բացառութիւնն է եկեղեցիներու անուանակոչութեան տօնը, երբ վարագոյրը կը բացուի, օրինակ Քառասնից Մանկանց եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչի տօներուն:

ՀԱՍՅԷ.



ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Եւ. 58.1-14 Հո. 13.11-14.25

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 6.1-21

Զգո՛յ՛, Աստուծոյ հանդէպ ձեր պարտաւորութիւնները մարդոց ներկայութեան մի՛ կատարէք ցոյցի համար, որովհետեւ այդ պարագային վարձատրութիւն պիտի չստանաք ձեր երկնաւոր Հօրմէն:

Երբ ողորմութիւն կ'ուզես տալ, փող ու թմբուկով մի՛ ըներ, մարդոց ուշադրութիւնը գրաւելու համար, ինչպէս կեղծաւորները կ'ընեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու վրայ՝ մարդոցմէ գովասանք ընդունելու ակնկալութեամբ: Վստահ եղէք, միայն այդ է անոնց վարձատրութիւնը: Ընդհակառակը, դուն երբ ողորմութիւն պիտի տաս, ձախ ձեռքդ թող չգիտնայ թէ ինչ կ'ընէ աջ ձեռքդ: Այսպիսով ողորմութիւնը գաղտնի ըրած կ'ըլլաս եւ քու երկնաւոր Հայրդ՝ որ անտեսանելի է, բայց կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս:

Նմանապէս, երբ կ'աղօթես, կեղծաւորներուն մի՛ նմանիր, որոնք կը սիրեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու անկիւնը աղօթել, որպէսզի մարդիկ իրենց աղօթելը տեսնեն: Վստահ եղէք, միայն այդ է անոնց վարձատրութիւնը: Այլ երբ պիտի աղօթես, մտի՛ր սենեակդ, գոցե՛ դուռը եւ աղօթէ քու երկնաւոր Հօրդ, որ անտեսանելի է. եւ Հայրդ որ կը տեսնէ կատարածդ, քեզի պիտի հատուցէ յայտնապէս: Տակաւին, երբ կ'աղօթես, մի՛ շատախօսեր հեթանոսներուն նման, որոնք կը կարծեն՝ որ եթէ երկար աղօթեն Աստուած պիտի լսէ զիրենք: Արդ, մի՛ նմանիր անոնց, որովհետեւ ձեր Հայրը գիտէ ինչ որ պէտք է ձեզի, նոյնիսկ երբ տակաւին իրմէ խնդրած չէք:

Ուրեմն այսպէս աղօթեցէք.

«Հայր մեր երկնաւոր, սրբաբանուի՛ անունդ. թող գայ արքայութիւնդ, թող կատարուի քու կամքդ, ինչպէս որ երկինքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ:

Ամենօրեայ մեր հացը այսօր եւս տուր: Ներե՛ մեր յանցանքները ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք կը գործեն: Եւ թոյլ մի՛ տար որ փորձութեան մէջ իյնանք. այլ մեզ չարէն ազատէ: Որովհետեւ քո՛ւկդ են միշտ՝ արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը. ամէն»:

Եթէ մարդոց ներք իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի ներէ ձեզի: Իսկ եթէ մարդոց չներէք իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի չներէ ձեր յանցանքները:

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆՂԱՆ

Բարեկենդան կը նշանակէ բարի կենդանութիւն, խրախմանք, նոխ եւ առատ ուտելիքներով վայելելու օր:

Գլխաւոր շաբաթապահերու նախորդ շաբաթ օրը կը կոչուի բարեկենդան եւ այդ առիթով կը թոյլատրուի անելի նոխ ուտել: Եկեղեցական օրացոյցի մէջ յաճախ կը հանդիպինք բարեկենդանի յիշատակութեան, որովհետեւ կարեւոր պահերը ունին իրենց բարեկենդանը:

Բայց բարեկենդաններուն մէջ յատկանշական է Մեծ Պահի նախընթաց Կիրակի օրը, որ կը կոչուի **ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆՂԱՆ**:

Բուն Բարեկենդանի օրը կը պատրաստեն նոխ սեղան, կը կատարեն դիմակաւոր խաղեր, խրախմանքներ եւ այլն:

Վանքերու մէջ նոյնիսկ Բուն Բարեկենդանի օրը որոշ ազատութիւն կը տրուէր եւ այդ օրը ժամանակին կը կոչուէր **ԱԲԵՂԱԹՈՂ**:

Բուն Բարեկենդանի նախորդ օրը՝ Շաբաթ երեկոյեան ժամերգութեան ընթացքին, եկեղեցւոյ խորանի վարագոյրը կը գոցուի եւ նոյն օրը կը սկսի արդէն ապաշխարութեան շրջանը: Հոգեւոր արարողութիւնները կը մեղմանան, Ս. Պատարագը կը մատուցուի վարագուրուած խորանին ետեւը: Այսպիսով կը սկսի քառասունօրեայ ապաշխարութիւնը եկեղեցւոյ մէջ:

Եկեղեցւոյ անուանակոչութեան եւ կամ կարեւոր սուրբերու տօներու առիթով, երբ կը մատուցուի հանդիսաւոր Սուրբ Պատարագ, վարագոյրը կը բացուի եւ տեղի կ'ունենայ բաց պատարագ:

Բուն Բարեկենդանի շաբաթանները կը պատմեն, թէ ինչպէ՞ս ստեղծուեցաւ մարդը եւ ապրեցաւ դրախտի փափկութեան մէջ: Այնտեղ դրախտի մէջ մարդը «ցնծայր գուարնացեալ անտիրական խնդութեամբ», որովհետեւ միշտ կը տեսնէր Աստուծոյ: Բուն Բարեկենդանի շաբաթաններու առանցքը «Դրախտի փափկութիւնը», «Դրախտի գուարնութիւնը» եւ նախատիպ մարդու՝ Ադամի երջանիկ վիճակը կը կազմէ: Քրիստոսը կը յիշատակուի որպէս երկրորդ Ադամ, որ իր միջոցով մարդոց արժանի դարձուց «Դրախտի փափկութեան»:

Բուն Բարեկենդանի շաբաթանները, նոյն օրը գուարնացնող մարդոց կը յիշեցնեն նաեւ Դրախտի հոգեւոր երջանկութիւնը եւ ուրախութիւնը:

Հ ԱՐՑ ՈՒՄ ՊԱՏ ԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

Ի՞նչ կը նշանակէ Հայ Եկեղեցի:

Հայ Եկեղեցի կը նշանակէ եկեղեցի հայերուն, այսինքն՝ եկեղեցի մը, որ ի բնէ կը պատկանի հայ ազգին կամ հայ ժողովուրդին: Ասոր համար կ'ըսուի նաեւ Հայոց Եկեղեցի:

Ի՞նչ կը նշանակէ Մայրենի Եկեղեցի:

Հայ Եկեղեցին հոգեւոր մայրն է իր ժողովուրդին եւ ժողովուրդն ալ հոգեւոր գաւակն է անոր: Որովհետեւ ժողովուրդը մկրտութեամբ հոգեւորապէս կը ծնի անոր ծոցէն, անկէ կ'առնէ իր հոգեւոր սնունդը եւ կը պաշտպանուի անոր հովանիին տակ ընդդէմ իր հաւատքին, բարոյականին եւ թշնամիներուն: Այս պատճառով կ'ըսուի ՄԱՅՐԵՆԻ ԵԿԵՂԵՑԻ:

Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ՎԱՍԱՀԻՆՔ ՈՐՊԷՍՁԻ ԶՎԱԽՆԱՆՔ

Յիսուս կը սպասէ, որ միշտ բացարձակ վստահութիւն ունենանք իր նկատմամբ: Հաւատացեալները երկու խումբի կը բաժնուին: Ոմանք միշտ Աստուծոյ կը վստահին, իսկ ուրիշներ փորձութիւններու հանդիպելէ ետք կը սկսին Աստուծոյ վստահիլ եւ յուսալ: Պէտք է Աստուծոյ վստահի՞լ որպէսզի չվախնանք, թէ պէտք է վախնանք որպէսզի Աստուծոյ վստահինք: Երբ աշակերտները փոքորիկի հանդիպեցան ծովուն վրայ՝ Յիսուս անոնց մօտ չտեսաւ իր ակնկալած վստահութիւնը իր նկատմամբ: Անոնք հրաշքը տեսնելէ ետք միայն վստահեցան իրեն: Ան յանդիմանեց զիրենք իրենց վստահութեան պակասին համար: Փորձութիւններ պէտք չէ պատճառ ըլլան որ խախտի մեր վստահութիւնը Աստուծոյ հանդէպ:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԸ

Երբ Աւետարանը կը կարդաս, հաճոյք ու հրճուանք մի փնտռեր, ոչ ալ փայլուն միտքեր, այլ՝ աշխատէ տեսնել անմեղունակօրէն սուրբ ճշմարտութիւնը: Մի՛ բաւարարուիր Աւետարանի անպտուղ ընթերցանութեամբ, այլ՝ ջանա՛ կատարել անոր պատուիրանները: Աւետարանը կարդայ գործերով: Անիկա կեանքի գիրքն է, եւ պէտք է կեանքով կարդալ զայն (Իգնատիոս Բրեանջանինով): Ինչպէս, որ աստղերու փայլիլոյ բոյլքն է, որ կը լուսաւորէ երկինքը, այդպէս ալ, ճրագի նման մեր ներսիդին զրուած աստուածային խօսքերու ճշմարտութիւնն է, որ կը լուսաւորէ մարդուն հոգին: (Նեղոս Սինայեցի):

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

ԵՐԲ ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՓՆՏՈՒՄ, ԿԱՐՂԱ՛ (Սաղմու 5)

Ո՛վ Տէ՛ր, լսէ ինչ որ կ'ըսեմ, նկատի՛ առ հեծեծանքներս:

Մտի՛կ ըրէ աղօթքս, ո՛վ իմ Թագաւորս եւ Աստուածս, կ'աղաչեմ քեզի:

Ո՛վ Տէ՛ր, առտու կանուխէն լսէ՛ կանչս եւ սպասեմ պատասխանիդ:

Դուն անօրէնութիւն չես սիրեր, ո՛վ Աստուած դուն չես կրնար չարիքին հետ հաշտուիլ. հպարտները չես հանդուրժեր եւ կ'ատես անօրէնութիւն գործողները, սուտ խօսողները կորուստի կը մատնես, արիւնահեղ ունենաւոր մարդէն կը գզուիս, ով Տէր: Բայց ես քու անչափ սիրոյդ ապաւինած՝ քու Տունդ պիտի մտնեմ, երկիւղածութեամբ դէպի սուրբ տաճարդ պիտի դառնամ ու երկրպագեմ:

Տէ՛ր, արդարութեամբդ առաջնորդէ զիս, քու նամբաղ հարթէ՛ իմ դիմացս, որպէսզի դառնամուտ թշնամիներս տեսնեն. որովհետեւ անոնց բերանը ստութեամբ լի է, եւ անոնց սիրտը՝ չարութեամբ լեցուն. բացուած գերեզման է կոկորդն անոնց եւ նենգութեան գործիք դարձեր են լեզուներն անոնց:

Ո՛վ Աստուած, անոնց յանցանքին պատիժը տուր, իրենց խորհուրդները թող կործանեն զիրենք. մերժէ՛ զիրենք իրենց ամբարիշտութիւններուն համար, որովհետեւ քեզի դէմ ըմբոստացան:

Շարունակել ընթերցել Սաղմուագիբէն